

## Ներգաղթի խախտումներ

### 415.1 ՆՊՍՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Այս քաղաքականության նպատակը Գլենդեյլի ոստիկանության վարչության անդամներին ներգաղթի մասին օրենքների հետաքննման եւ կիրառման համար ուղեցույցներ տրամադրելն է:

### 415.2 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլենդեյլի ոստիկանության վարչության քաղաքականությունն է, որ բոլոր անդամներն օրենքի հավասար կիրառման և հասարակությանը հավասար ծառայություն մատուցելու համար անձնական և մասնագիտական պարտավորություններ ստանձնեն: Այս պարտավորության նկատմամբ վստահությունը կբարձրացնի այս բաժնի արդյունավետությունը՝ ողջ համայնքի պաշտպանության և սպասարկման, ինչպես նաև բոլոր անձանց արժանապատվությունը ճանաչելու մեջ՝ անկախ նրանց ներգաղթի կարգավիճակից:

### 415.3 ՏՈՒՃԱԾՆԵՐ ԵՎ ՎԿԱՆԵՐ

Քրեական գործի քննության մեջ հանցագործության մասին զեկուցելու և համագործակցությունը խրախուսելու համար բոլոր անձինք, անկախ իրենց ներգաղթի կարգավիճակից, պետք է ապահով զգան, որ իրավապահ մարմինների անդամներին դիմելը կամ նրանց կողմից հասցեագրված լինելը ինքնաբերաբար չի հանգեցնի ներգաղթի հարցաքննության և (կամ) արտաքսման: Թեև հնարավոր է, որ անհրաժեշտ լինի որոշել տուժածի կամ վկայի ինքնությունը, այնուամենայնիվ, իրավապահ անդամները պետք է բոլոր անհատներին վերաբերվեն հավասարապես և որևէ կերպ հաշվի չառնեն ռասան, գույնը կամ ազգային ծագումը, որը կհանգեցնի Միացյալ Նահանգների կամ Կալիֆորնիայի սահմանադրությունների խախտմանը:

### 415.4 ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Եթե հասարակության անդամները դիմեն Գլենդեյլի ոստիկանության վարչություն՝ կասկածելի ներգաղթի խախտումների մասին հաղորդելու համար, ապա այդպիսի անձանց պետք է ուղղորդել Ներգաղթի և մաքսային օրենքների կիրառման (ICE) բաժնի:

#### 415.4.1 ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԸՆԴԴԵՄ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱՄՏՈՒՄՆԵՐԻ

Այն անձը, ով ապօրինաբար է մուտք գործում Ամերիկայի Միացյալ Նահանգներ, կատարում է իրավախախտում (8 USC § 1325(a)): Ընդհանրապես, օտարերկրացին, ով սկզբում օրինական

*Ներգաղթի խախտումներ*

կերպով է մուտք գործել Միացյալ Նահանգներ, սակայն մնացել է օրինական ժամանակաշրջանից ավել, ապա կատարել է դաշնային քաղաքացիական իրավախախտում:

Քրեական ներգաղթի խախտման վերաբերյալ ողջամիտ կասկածը չպետք է հիմնված լինի ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման կամ որևէ այլ ընդհանրացման վրա, որը կասկածի կենթարկի կամ կվարկաբեկի որևէ անձի՝ բացառությամբ Միացյալ Նահանգների կամ Կալիֆորնիայի սահմանադրությունների կողմից թույլատրված սահմանաչափի: Փոխարենը, ողջամիտ կասկածի պարզման համար պետք է օգտագործել հանգամանքների ամբողջականությունը, և պետք է ներառել հիմնավոր կասկածների դեմ և կողմ գործոնները:

Գործոնները, որոնք կարող են դիտարկվել տեղի ունեցած քրեական ներգաղթի խախտման վերաբերյալ հիմնավոր կասկածի պարզման մեջ, կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

- (a) Ընդունում, որ անձը ապօրինաբար է մտել Միացյալ Նահանգներ:
- (b) Կասկածի պատճառ, որ անձը ունի ներգաղթի վերաբերյալ փաստաթղթեր, որոնք կեղծ են, փոփոխված կամ այլ կերպ վկայում են, որ անձը օրինական կերպով չի գտնվում Միացյալ Նահանգներում:
- (c) Հնարավորության դեպքում, ողջամիտ ջանքեր պետք է գործադրվեն անգլերենի սահմանափակ իմացությամբ անձանց ընդունելու համար:
- (d) Վերապատրաստման և փորձի վրա հիմնված այլ գործոններ:

**415.4.2 ՆԵՐԳԱՂԹԻ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ**

Ներգաղթի կարգավիճակը կարելի է պարզել հետևյալ որևիցե մեկ աղբյուրի միջոցով.

- (a) Իրավապահ մարմնի աշխատակից, ով, համաձայն 8 USC § 1357-ի, լիազորված է դաշնային կառավարության կողմից՝ օտարերկրացիների ներգաղթի կարգավիճակը ստուգելու կամ հաստատելու համար (երբեմն կոչվում է «287 (q) հավաստագրված սպա»)
- (b) Ներգաղթի և մաքսային օրենքների կիրառման բաժին (ICE)
- (c) ԱՄՆ-ի Մաքսային և սահմանային պաշտպանություն (CBP)

Սպան պետք է ստուգի 287 (q) հավաստագրված աշխատակցից, ICE-ից կամ CBP-ից, թե արդյո՞ք ԱՄՆ-ում անձի ներկայությունը վերաբերում է դաշնային քաղաքացիական խախտմանը, թե՞ քրեական իրավախախտմանը:

Եթե աշխատակիցն ունի փաստեր, որոնք հավանական հիմք են ստեղծում՝ հավատալու, որ արդեն օրինականորեն կալանքի տակ պահվող անձը քրեական ներգաղթի իրավախախտում է կատարել, ապա նա կարող է շարունակել կալանքը և կարող է պահանջել, որ ICE-ն կամ CBP-ն պատասխանեն գտնվելու վայրին՝ նրան բանտում կալանքի տակ պահել: Բացի այդ, սպան պետք է հնարավորինս շուտ ծանուցի վերահսկիչին: Ոչ մի անձ, ով այլապես պատրաստ է ազատ արձակման, չպետք է շարունակի կալանքի տակ պահվել միայն այն պատճառով, որ նրա կարգավիճակի վերաբերյալ հարցերը լուծված չեն:

*Ներգաղթի խախտումներ*

**415.4.3 ՎԵՐԱՀՄԿՉԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Երբ տեղեկություն ստացվի, որ սպան մարդ է ձերբակալել և հաստատել հավանական հիմք՝ հավատալու, որ անձը կատարել է քրեական ներգաղթի իրավախախտում, ապա վերահսկիչը պետք է՝

- (a) Հաստատի, որ կալանավորված անձի ներգաղթի կարգավիճակը պատշաճ կերպով ստուգվել է:
- (b) Ապահովի, որ ձերբակալված անձը, ըստ անհրաժեշտության, բանտում կալանքի տակ պահվի: Անհրաժեշտ է լրացուցիչ քայլեր ձեռնարկել, որոնք կարող են ներառել, բայց չեն սահմանափակվում թվարկածով՝
  - 1. Փոխանցել դաշնային մարմիններին
  - 2. Օրինական ձերբակալություն՝ քրեական հանցագործության համար, կամ ձերբակալման կարգադրագիր:

**415.5 ՁԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԳԱՂԹԻ և ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԲԱԺՆԻՆ**

Բացառությամբ ստորև նկարագրվածի, կարիք չկա տեղեկացնել ICE- ին վարչաշրջանի բանտում ձերբակալվածներին գրանցելու մասին: Ներգաղթի հարցերով պաշտոնյաները պարբերաբար հարցազրույց են անցկացնում կասկածյալ, առանց փաստաթղթերի օտարերկրացիների հետ, ովքեր գրանցված են շրջանի բանտերում: Ծանուցումը պետք է կատարել բանտային գործողության ընթացակարգերի համաձայն:

Երբ սպան ունի հիմք ենթադրելու, որ «Առողջության և անվտանգության մասին» օրենսգրքի 11369-րդ հոդվածում թվարկված որևէ իրավախախտման համար ձերբակալված անձը չի կարող լինել ԱՄՆ քաղաքացի, և անձը չի պատրաստվում գրանցվել վարչաշրջանի բանտում, ապա ձերբակալող սպան պետք է ծանուցի ICE-ին կամ ԱՄՆ-ի համապատասխան այլ գործակալությանը:

Այլ իրավախախտումների համար ձերբակալված անձանց մասին, ովքեր չեն արձանագրվելու վարչաշրջանի դատարանում, կարելի է զեկուցել ICE-ի կամ ԱՄՆ-ի համապատասխան այլ գործակալությանը:

Ներգաղթի հարցերով իրավասու մարմնի ծանուցման համապատասխան լինելը որոշելիս սպան պետք է, խորհրդակցելով ղեկավարին հետ, քննարկի յուրաքանչյուր գործի հանգամանքների ամբողջականությունը՝ ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալով՝

- (a) Իրավախախտման լրջությունը
- (b) Համայնքի անվտանգությունը
- (c) Ներգաղթած համայնքի վրա ազդեցությունը

Ոչ մի անհատ, ով այլապես պատրաստ է ազատ արձակման, չպետք է շարունակի ձերբակալված մնալ միայն այն նպատակով, որ ծանուցվի ներգաղթի հարցերով զբաղվող

## *Ներգաղթի խախտումներ*

մարմիններին:

### **415.6 ICE-ի ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ**

ICE-ի կամ այս վարչությունից որևէ այլ դաշնային գործակալության դիմումները պետք է ուղղվեն ղեկավարին: Վարչությունը կարող է ICE-ին կամ այլ դաշնային գործակալություններին տրամադրել հասանելի աջակցության ծառայություններ, ինչպիսիք են՝ երթևեկության վերահսկումը կամ խաղաղապահ ուժերը:

### **415.7 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄ**

Այս վարչության անդամներից որևէ մեկը չի կարող որևէ այլ անդամի արգելել կամ որևէ կերպ սահմանափակել ցանկացած անձի օրինական կամ անօրինական քաղաքացիության կամ ներգաղթի կարգավիճակի վերաբերյալ կատարել հետևյալ գործողությունները (8 USC § 1373)՝

- (a) Տեղեկատվություն ուղարկել կամ նման տեղեկատվություն ստանալ կամ հարցում անել ICE- ից
- (b) Նման տեղեկության պահպանումը բաժնի արձանագրություններում
- (c) Նման տեղեկատվության փոխանակում որևէ այլ դաշնային, պետական կամ տեղական կառավարման մարմինների հետ:

#### **415.7.1 ՆԵՐԳԱՂԹԻ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՇԵԼ**

Անհատները չպետք է բանտում կալանքի տակ պահվեն՝ միայն քաղաքացիական ներգաղթի կալանքի տակ պահվելու համար՝ համաձայն 8 CFR 287.7-ի, եթե անհատը (Կառավարության օրենքի § 7282; Կառավարության օրենքի § 7282.5):

- (a) Չի դատապարտվել Կառավարության օրենքի § 7282.5-ով սահմանված իրավախախտումների համար:
- (b) Նրան մեղադրանք չի առաջադրվել Կառավարության օրենքի § 7282.5-ում նշված իրավախախտումների համար, երբ դատարանը որոշել է, որ հավանական պատճառը համապատասխանում է մեղադրանքին:
- (c) սեռական կամ միտումնավոր հրկիզան ռեզիստրանտ չէ:

Ոչ մի դեպքում անձը չպետք է պահվի այս բաժնում ավելին, քան 48 ժամ: Դաշնային մարմինն ծանուցումը պետք է կատարել մինչև ազատ արձակումը:

#### **415.7.2 ICE-ի ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ**

Նախքան ICE-ի անձնակազմի և կալանքի տակ գտնվող անձի միջև քաղաքացիական ներգաղթի խախտումների վերաբերյալ որևէ հարցազրույցի անցկացումը, Գլենդելի ոստիկանության վարչությունը անձին պետք է տրամադրի գրավոր համաձայնության ձև, որը բացատրում է հարցազրույցի նպատակը, որ հարցազրույցը կամավոր է, և որ նա կարող է հրաժարվել հարցազրույցից կամ կարող է ընտրել հարցազրույց անց կացնել միայն իր փաստաբանի ներկայությամբ: Համաձայնության ձևը պետք է հասանելի լինի

*Ներգաղթի խախտումներ*

Կառավարության օրենսգրքի §7283.1-ում սահմանված լեզուներով:

**415.7.3 ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՆՀԱՏՆԵՐԻՆ**

Անհատներին պետք է տրամադրել Ներգաղթի և մաքսային օրենքների կիրառման բաժնից (ICE) ստացված փաստաթղթերի պատճենը, որը վերաբերում է կալանքի տակ պահելուն, ծանուցմանը կամ փոխանցման դիմումին, ինչպես նաև տեղեկություն, թե արդյոք Գլենդեյլի ոստիկանության վարչությունը մտադիր է հարցումը իրականացնել (Կառավարության օրենսգրքի § 7283.1)։

Եթե Գլենդեյլի ոստիկանության վարչությունը ICE-ին տրամադրում է ծանուցում, որ անձը ազատվում է կամ կազատվի որոշակի ամսաթվին, ապա նույն ծանուցումը պետք է գրավոր ձևով տրամադրվի անձին, իր փաստաբանին կամ այդ անձի կողմից նշանակված լրացուցիչ անձին (Կառավարության օրենք § 7283.1)։

**415.8 Ս ԱՐՏՈՆԱԳՐՈՎ և T ԱՐՏՈՆԱԳՐՈՎ ՉՆԵՐԳԱՂԹԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ**

Դաշնային օրենքը որոշ հանգամանքներում որոշ իրավասու իրավախախտումներից տուժածներին և վկաներին թույլ է տալիս ժամանակավոր ներգաղթի նպաստներ, որը հայտնի է որպես U արտոնագիր (8 USC § 1101(a)(15)(U))։ U արտոնագրի իրավական հաստատումը կարող է իրականացվել սպայի կողմից, որպեսզի այդ արտոնագիրը տրամադրվի։

Նմանատիպ ներգաղթի պաշտպանության մեկ այլ տեսակ, որը հայտնի է որպես T արտոնագիր, հասանելի է մարդու թրաֆիքինգի որոշ իրավասու տուժածներին (8 USC § 1101(a)(15)(T))։ T արտոնագրի համար իրավական հայտարարագիրը կարող է լրացվել սպայի կողմից՝ T արտոնագրի տրամադրման համար։

U և T արտոնագրերի համար դիմելու հարցում աջակցություն ստանալու համար ցանկացած դիմում պետք է ժամանակին ուղարկվի Հետաքննող ծառայությունների բաժնի վերահսկչին, ով նշանակված է համապատասխան գործի վարումը վերահսկելու համար։ Հետաքննող ծառայության բաժնի վերահսկիչը պետք է՝

- (a) խորհրդակցի նշանակված քննիչի հետ՝ որոշելու համապատասխան գործի ներկայիս կարգավիճակը, և թե արդյոք լրացուցիչ փաստաթղթեր են պահանջվում։
- (b) կիրառելիության դեպքում, կապվի համապատասխան գործի դատախազի հետ, որպեսզի ապահովվի, որ հավաստագրումը կամ հայտարարագրումը դեռևս չի լրացվել, և որ հավաստագիրը կամ հայտարարագիրը հիմնավորված են։
- (c) անհրաժեշտության դեպքում, ժամանակին հասցեագրի դիմումը և լրացնի հավաստագիրը կամ հայտարարությունը:
  1. Հավաստագրման և հայտարարագրերի ձևերի լրացման վերաբերյալ հրահանգներ կարելի է գտնել ԱՄՆ Ներքին անվտանգության վարչության (U.S. Department of Homeland Security (DHS)) կայքում։
  2. Ձևաթուղթ I-918-ի Հավելված B հավաստագիրը պետք է լրացվի, եթե տուժածը իրավասու է՝ համաձայն Քրեական օրենսգրքի § 679.10-ի։ Ձևաթուղթ I-914 Հավելված

### *Ներգաղթի խախտումներ*

B հավաստագիրը պետք է լրացվի, եթե տուժածը իրավասու է՝ համաձայն Քրեական օրենսգրքի § 236.5 կամ Քրեական օրենսգրքի § 679.11 (մարդու թրաֆիքինգ)։

- (d) Ապահովի, որ վկայագրման կամ հայտարարագրման ձևը լրացնելու կամ չլրացնելու որոշումը արձանագրված է գործերի թղթապանակում, և փոխանցվում է համապատասխան դատախազին: Ներառել լրացված ձևի պատճենը գործերի թղթապանակում:
- (e) Տեղեկացնել տուժածի վերաբերյալ ցանկացած դիմումի և նրանց կարգավիճակի մասին:

#### **415.8.1 ԼԲԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Սպաները և նրանց ղեկավարները, ովքեր նշանակված են մարդու թրաֆիքինգի վերաբերյալ գործը հետաքննելու համար՝ Քրեական օրենսգրքի 236.1-րդ կետով սահմանված կարգով, պետք է կատարեն վերը նշված գործընթացը և լրացնեն T արտոնագրի դիմումի համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ տուժողի հետ առաջին հանդիպումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում, անկախ այն բանից, թե տուժողը պահանջվում է, թե ոչ (Քրեական օրենսգրքի § 236.5):

Սպաները և նրանց ղեկավարները պետք է լրացնեն վերը նշված գործընթացը և U և T արտոնագրերի դիմումի համար անհրաժեշտ փաստաթղթերը՝ համաձայն Քրեական օրենսգրքի § 679.10-ի և Քրեական օրենսգրքի § 679.11-ի՝ տուժողի կամ տուժողի ընտանիքի խնդրանքով, 90 օրվա ընթացքում, կապված իրենց հանձնարարված գործերից մեկի հետ: Եթե տուժողը գտնվում է հեռացման գործընթացում, ապա հավաստագրումը պետք է կատարվի հարցումից 14 օրվա ընթացքում:

#### **415.8.2 ԶԵԿՈՒՑՈՒՄ ՕՐԵՆՍԴԵՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ**

Հետաքննող ծառայությունների բաժնի ղեկավարը կամ լիազորված անձը պետք է ապահովեն, որ հավաստագրման պահանջները զեկուցվում են օրենսդրական մարմնին յուրաքանչյուր տարվա հունվարին, և ներառում են ստորագրված և մերժված հավաստագրերի թվերը: Զեկույցը պետք է համապատասխանի Կառավարության օրենքի § 9795-ին (Քրեական օրենսգրքի § 679.10 և Քրեական օրենսգրքի § 679.11):

#### **415.9 ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

Վերապատրաստման մենեջերը պետք է ապահովի, որ բոլոր համապատասխան անդամները ստանան ներգաղթի վերաբերյալ վերապատրաստում: